**Արձանագրություն N 2**

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/34 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

26.09.2022թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մաճկալյան, Մ.Համբարձումյան, Տ.Բաղալյան, Մ.Սամսոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Ներսիսյան

1. ***Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ***

| ***Չափաբաժնի համարը*** | ***Չափաբաժնի անվանումը*** | ***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*** |
|---|---|---|
| 1 | Ղեկավարի գրասեղան (Լրակազմ) | 300000 |
| 2 | Սեղան խորհրդակցության | 300000 |
| 3 | Գրասեղան երկու տումբանի | 300000 |

2. ***Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ***

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 22.09.2022թ.-ին ժամը 11:30-ին:
Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.09.2022թ.-ին ժամը 11:30-ին:

3. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն***

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Գործունեության հասցեն | Կապի միջոցներ | Էլ. հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ Կարեն Գևորգյան | ք.Երևան Լուկաշինի 1փ.9/1, | +37455688668 | - |

4. ***Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/34 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. ***Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## *6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

| Հ/Հ | Մասնակից | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | Ա/Ձ Կարեն Գևորգյան | 300000 | 0 % | 300000 | 300000 | 0 % | 300000 | |
| 2 | | 300000 | 0 % | 300000 | 300000 | 0 % | 300000 | |
| 3 | | 300000 | 0 % | 300000 | 300000 | 0 % | 300000 | |

Աճուրդն ամփոփվել է 23.09.2022թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել Ա/Ձ Կարեն Գևորգյանն:

*7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին*

Հանձնաժողովն ուսումնասիրելով Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտը/հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիր» սյունակում երաշխիքային ժամկետը ենթակա է հստակեցման, ինչպես նաև 1-ին և 2-րդ չափաբաժիններում հստակեցնել «...սեղանածածկի (սեղանի երեսի) և ոտքերի եզրերը պրոֆիլապատ, 4-6 սմ հաստացումով:» նախադասությունները: Իսկ «Ապրանքային նշանը» սյունակը ենթակա է շտկման

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/34 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց 26.09.2022թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից Ա/Ձ Կարեն Գևորգյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

## *8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին*

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 28.09.2022թ. ժամը 11:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

## *9. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ*

Նիստը վերսկսվեց 28.09.2022թ. ժամը 11:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ Կարեն Գևորգյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

***10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ***

28.09.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Կարեն Գևորգյան Ա/Ձ-ին՝ հայտարարել ընտրված մասնակից:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Վարդան Թորոսյան

անդամներ՝ ________________ Միհրան Մաճկալյան

________________ Մարիամ Համբարձումյան

________________ Տիգրան Բադալյան

________________ Մերուժան Սամսոնյան

քարտուղար՝ ________________ Անի Ներսիսյան